58-ՐԴ ՆԻՍՏ

8 հունվարի 1919թ.

Նիստը բացվում է երեկոյան ժ. 8-ին, նախագահությամբ *Ա. Սահակյանի*, մինիստրական օթյակում են խնամատարության, ֆինանսների և իրավարարության մինիստրները:

Ն. Աղբալյան - Զեկուցում է 1918թ. հոկտեմբերի 23-ի օրենքը (մնացորդ գումարները գանձարան հետ դարձնելու վերաբերմամբ) փոփոխելու օրինագծի մասին:

Խորհրդարանը որոշեց վերացնել այդ օրենքն ամբողջովին և այդ որոշումը հաստատել վերջնականապես:

Հ. Սարգսյան - Զեկուցում է երկրագործական և պետական գույքերի վարչության օրինագծի մասին:

Վեճ է սկսվում այն մասին, թե՝ ա) հատուկ մինիստրություն պիտի կազմվի՞ դրա համար, թե՞ ոչ և բ) եթե մինիստրություն չպիտի կազմվի, այն դեպքում ո՞ր մինիստրության պիտի կից լինի՝ ֆինանսակա՞ն, թե՞ ներքին գործոց: Վեճին մասնակցում և թեր ու դեմ խոսում են Մինախորյան, Եր. Հարությունյան, Ս. Վրացյան, Բուդաղյան, Ալ. Մելիք-Աղաջանյան, Ղարաջյան և Գյուլնազարյան:

Մերժվում է մինիստրություն հիմնելու առաջարկը և որոշվում է կցել այն ներքին գործոց մինիստրության՝ անվանելով գլխավոր վարչություն:

Խորհրդարանի որոշմամբ այդ գլխավոր վարչությունից դուրս են հանվում լեռնային և ջրային ուժի մասերը և հանձնվում ֆինանսների մինիստրության:

Օրինագիծը ամբողջությամբ, հավելումներով և կրճատումներով, գ-րդ ընթերցումով ընդունվում է ու հանձնվում խմբագրական հանձնաժողովին:

Խորհրդարանը ներումն է շնորհում բանտարկության դատապարտված ենթասպա Աղասի Պապանյանին և զինվոր Ալեքսան Գրիգորյանին, վերականգնելով դատարանի որոշումով նոցա կորցրած իրավունքները:

Նիստը փակվեց ժ. 12-ին:

«Զանգ», 24 հունվարի 1919թ.